Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ դատախազության աշխատակցի օրվա առթիվ

01.07.2025

Հարգելի՛ դատախազության համակարգի ներկայացուցիչներ, վետերաններ,
Շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ դատախազության աշխատակցի օրվա կապակցությամբ:
Դուք մշտապես գտնվում եք օրենքի և արդարության պաշտպանության առաջնագծում՝ կրելով մեծ պատասխանատվություն քաղաքացիների իրավունքների, հասարակական կարգի ու պետության շահերի պաշտպանության գործում:
Այսօր, երբ գնահատում ենք մեր երկրի իրավական համակարգի արդարությունն ու ամուր հիմքերը, չենք կարող շնորհակալություն չհայտնել Ձեզ՝ իրավունքի պաշտպանման, օրենքի գերակայության ու արդարության առջև ստանձնած կարևոր պարտավորությունների համար:
Դատախազության համակարգը կարևոր դեր է խաղում երկրի ներքին ու արտաքին կայունության ապահովման գործում, իսկ Ձեր աշխատանքի որակն ու արդյունավետությունը թույլ են տալիս պահպանել ժողովրդի վստահությունը:
Շնորհակալություն Ձեր աշխատանքի համար՝ ի նպաստ հասարակության իրավական բարեկեցության ու արդարության:
Հարգանքով՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան